ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում ***11.11.2013թ.*** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ն.Մովսիսյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Աբգարյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ս.Միքայելյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում առ 01.11.2013թ. սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

2. Աշնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին / ղեկ. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/ :

3. Բնակչության ռեգիստրում մարզի բնակչության հաշվառման խնդիրների մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

4. Մինչև 2013 թվականի դեկտեմբերի 15-ը մարզի համայնքների բյուջեների կազմման գործընթացի մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

5. Մարզի համայնքապետարաններում համակարգչային տեխնիկայի համալրման և արդիականացման, ինչպես նաև ինտերնետային կապի ձեռքբերման և դրա որակի բարելավման գործընթացի մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

6. Համայնքների ղեկավարներին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և դրանց գործունեության մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

7. Մարզի համայնքներում աղբահանության գործընթացի կազմակերպման մասին /զեկ. քաղաքաշնության վարչության պետ Ա. Դավայան/:

8. Համայնքներում առևտրային կազմակերպությունների հարկային պարտավորությունների կատարման գործընթացի մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան /:

9. Այլ հարցեր և հայտարարություններ:

10. Կից զեկուցողների զեկուցագրերը:

Մինչ օրակարգային հարցերի քննարկմանն անցնելը, մարզպետ Սարգիս Սահակյանը համայնքապետերին ներկայացրեց նորանշանակ փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանին: Օրակարգային առաջին հարցով մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստայանը խոսեց համայնքներում այս տարվա 10 ամիսների ընթացքում սեփական եկամուտների հավաքագրման եւ նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների եւ սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին: Զեկուցողը նշեց,որ նախորդ տարիներին գոյացած աշխատավարձերի ու սոցվճարների պարտքերի մարման մասով էական փոփոխություն կա և այն կփակվի ըստ սահմանված ժամանակացույցին:

Քննարկվեցին նաեւ աշնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի, բնակչության ռեգիստրում մարզի բնակչության հաշվառման խնդիրների, համայնքների բյուջեների կազմման, համայնքապետարաններում համակարգչային տեխնիկայի համալրման եւ արդիականացման, համայնքներում աղբահանության գործընթացների մասին եւ այլ հարցեր:

Նշված հարցերին անդրադարձավ մարզպետ Սարգիս Սահակյանը: Նա համայնքապետերի ուշադրությունը հրավիրեց հատկապես սեփական եկամուտների կատարման վրա, նշելով, որ դրանով է պայմանավորված սոցիալ-տնտեսական զարգացումը: Առաջիկայում միջազգային մի շարք կազմակերպությունների հետ հանդիպում է կայանալու, որտեղ քննարկվելու են մարզում իրականացվող ներդրումային ծրագրերի հնարավորությունները: Իսկ այդ ամենի իրականացումը պայմանավորված է նաեւ համայնքների համաֆինանսավորմամբ, ինչն էլ ենթադրում է սեփական եկամուտների առավելագույս կատարում, նշեց մարզպետը:

Նա անդադարձավ կառավարության կողմից նաեւ հողօգտագործողներին դիզելային վառելիքի, պարարտանյութի, հացահատիկի սերմացուի, թունաքիմիկատների հատկացման գործընթացներին: Նշվեց, որ այս ամենը միտված է աջակցելու գյուղացիական տնտեսություններին՝ իրենց հողատարածքները մշակելու, արտադրանքը իրացնելու եւ հնարավորինս բարձր արդյունքներ ստանալու համար:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Մարզպետի տեղակալ Մ.Աբգարյանին և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանին

--- Մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով մարզին մկնասպան թունանյութ տրամադրելու գործընթացը կազմակերպելու և ավարտին հասցնելու վերաբերյալ:
/Ժամկետ 10 օր /

2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայան

--- Մարզի քաղաքների և համայնքների հարակից բնակավայրերի համար աղբահանության նոր տարածքների տեղի ընտրության վերաբերյալ կատարել քննարկումներ համայնքների ղեկավարների հետ և ներկայացնել տեղեկատվություն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.***Թալինի ՄԾՏԳ-ի պետ Ա.Կարապետյան***

--- Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ:

2. ***Մարզպետ Ս.Սահակյան***

--- <<Լույս հայի աչքերին>> ծրագրի շրջանակներում մարզում իրականացվող գործընթացին աջակցելու և համապատասխան տեղեկատվությունը շահառուներին տրամադրելու վերաբերյալ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ